

«ՎԱՆԱԶՈՐԻ Է. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ



Հավելված

Վանաձորի Է. Թումանյանի անվան
պենտրոնի համալսարանի հիմնադրամի
ոեկտորի 07.04.2022 թ. թիվ 381 Լ/Մ հրամանի

ՎԱՆԱԶՈՐԻ Է. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 11, 31.03.2022 թ.

Վանաձոր

2022 թ.

1. Ընդհանուր դրույթներ

Սույն կանոնակարգը սահմանում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) շրջանակներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները՝ համաձայն Հիմնադրամների մասին ՀՀ օրենքի և ՎՊՀ կանոնադրության:

2. Ձեռնարկատիրական գործունեության նպատակներն են՝

- իրականացնել գործունեություն շահույթ ստանալու նպատակով,
- խթանել ձեռնարկատիրական մշակույթի և ձեռնարկատիրական հմտությունների ու կարողությունների զարգացումը Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների (ասպիրանտ, հայցորդ, մագիստրանտ, բակալավր) շրջանում,
- նպաստել Հալասարանի դասախոսական կազմի և ուսանողության համագործակցային հարաբերությունների ձևավորմանը, խմբային գործունեության առաջխաղացմանը,
- կազմել համապատասխան Նախագծեր նաև սոցիալական խնդիրներ լուծելու նպատակով,
- նպաստել Համալսարանի գիտահետազոտական և ուսումնամեթոդական արտադրանքի//արդյունքների առևտրայնացմանը,
- նպաստել հանրային (ևսև համալսարանական) տարատեսակ կարիքների և պահանջմունքների (հանգիստ, կենցաղ, բուժում և այլն) բավարարմանը,
- Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին ներգրավել ձեռնարկատիրական աշխատանքներում,
- Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար ստեղծել նախադրյալներ, որոնք կնպաստեն նրանց՝ համալսարանական (և ոչ միայն) Նախագծեր կազմելու նախապատրաստական աշխատանքներում հմտանալուն:

3. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող խմբի (այսուհետ՝ Խումբ) ձևավորումը և ղեկավարին ու անդամներին ներկայացվող պահանջները

3.1. Խումբը ձևավորվում է ղեկավարի նախաձեռնությամբ՝

Նախագծի հիման վրա:



3.2. Խմբի կազմի մեջ ընդգրկվում են՝

- Խմբի ղեկավարը, որը Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հիմնական աշխատող է:
- Խմբի անդամները, որոնց Խմբի ղեկավարն ընտրում է Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հիմնական և/կամ ներքին համատեղությամբ աշխատողներից և/կամ ուսանողներից:
- Նախատեսված աշխատանքում թերացող անդամները Խմբի ղեկավարի գեկուցագրի հիման վրա կարող են փոխարինվել այլ անդամներով:
- Միևնույն անձը (դասախոս կամ ուսանող) կարող է ընդգրկվել տվյալ փուլի միայն մեկ Նախագծում:

3.3. Խմբի ղեկավարի գործառույթներն են՝

- Նախագծի բոլոր գործառույթների կազմակերպումը, իրականացումը և վերահսկումը, խմբի ղեկավարումը,
- Նախագծին առնչվող ֆինանսական, տեխնիկական և այլ գործառույթների համապատասխան փաստաթղթերի ձևակերպումն ու պատրաստումը,
- կատարված աշխատանքների ընթացքի և արդյունքների վերաբերյալ փորձագիտական հանձնաժողովին հաշվետվությունների ներկայացումը Նախագծում և պայմանագրում նշված պարբերականությամբ:

4. Փորձագիտական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորումը և գործառույթները

- Հանձնաժողովը ձևավորվում է Նախագծերի և հայտերի ուսումնասիրության, եզրակացությունների և խորհրդատվությունների տրամադրման, հաշվետվությունների քննարկման, գնահատման, ըստ անհրաժեշտության, տվյալ ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցնելու մասին առաջարկ ներկայացնելու, ինչպես նաև Համալսարանին պատճառած վնասների փոխհատուցման կարգը սահմանելու նպատակով:
- Հանձնաժողովն ինքն է սահմանում մրցույթների անցկացման ընթացակարգը և ձևաթղթերը, որոնք հաստատվում են Ռեկտորի հրամանով:
- Հանձնաժողովի կազմը վավերացվում է Ռեկտորի հրամանով և այն կառուցվածքի հաստատումից հետո՝ եռօրյա ժամկետում:
- Հանձնաժողովի կազմը 5 հոգի է: Համալսարանից Հանձնաժողովում ընդգրկվում են հիմնական աշխատողներ (հանձնաժողովի կեսից ավելին) հաշվապահությունից (մեկ



աշխատող) և պրոֆեսորադասախոսական անձնակազմից (երկու աշխատող):
Հանձնաժողովի կազմում համաձայնությամբ ներգրավվում են նաև ոլորտի՝
հեղինակություն վայելող, մասնագետներ, Նախագծեր իրականացնող գործարար
անձինք (2 հոգի):

- Առանձին դեպքերում Հանձնաժողովի աշխատանքներում ընդգրկված անդամները
կարող են փոխարինվել նորերով՝ չխախտելով սահմանված համամասնությունը:

- Եթե հանձնաժողովի նիստում քննարկվում է հանձնաժողովի որևէ անդամի կամ նրա
հետ փոխկապակցված անձի գույքային կամ այլ շահերի վերաբերյալ Նախագիծ կամ
հարց, ապա հանձնաժողովի տվյալ անդամը տվյալ հարցի կամ Նախագծի քննարկմանը
և քվեարկությանը չի կարող մասնակցել:

- Հանձնաժողովի կողմից դրական եզրակացության արժանացած Նախագծերի
իրականացման մեկնարկը տրվում է Ռեկտորի հրամանով:

- Հանձնաժողովի կողմից դրական եզրակացության արժանացած Նախագծի Խմբի
ղեկավարի և Ռեկտորի միջև կնքվում է պայմանագիր, որում ներառվում է դրույթ,
համաձայն որի՝ Խմբի ղեկավարը պարտավորվում է փոխհատուցել
ձեռնարկատիրական գործունեության ընթացքում Համալսարանին պատճառած
ֆինանսական, տնտեսական և այլ վնասները:

- Սույն կանոնակարգով նախատեսված պահանջների չկատարումը, ինչպես նաև
Նախագծով նախատեսված ցուցանիշների թերակատարումները՝ արձանագրված
Հանձնաժողովի նիստի համապատասխան որոշմամբ, հիմք են ծառայում պայմանագիրը
լուծելու նշված ժամկետից շուտ:

- Լուծված Նախագծի ղեկավարը և/կամ անդամ(ներ)ի չեն կարող ընդգրկվել այլ
Նախագծերում:

- Ռեկտորը պայմանագիրը լուծում է նաև Հանձնաժողովի՝ յուրաքանչյուր ընթացիկ
հաշվետվության մասին բացասական եզրակացության հիման վրա:

5. Ձեռնարկատիրական խմբերի գործունեության աջակցությունը

- Համալսարանը Խմբի գործունեությանը կարող է աջակցել ֆինանսապես, տարածքով,
ինչպես նաև արդեն առկա գույքով և սարք-սարքավորումներով, որոնցից վերջիններս
Խմբի գործունեության ավարտից կամ կասեցումից հետո մնում են Համալսարանի
տրամադրության ներքո:



- Ֆինանսավորումը կատարվում է Ռեկտորի հրամանով՝ Համալսարանի բյուջեի՝ ձեռնարկատիրական գործունեության խթանման ֆոնդից՝ ըստ Նախագծում նշված չափաբաժինների ու ժամանակացույցի:

- Ֆինանսավորման համար հիմք է ծառայում Հանձնաժողովի դրական եզրակացությունը:

- Նախագծի իրականացման տևողությունը առավելագույնը 12 ամիս է:

- Ձեռնարկատիրական գործունեության մրցույթ անցկացվում է տարեկան մեկ անգամ:

- Նախագծերի և հայտերի ներկայացման վերջնաժամկետը ապրիլի 30-ն է:

- Մեկ Նախագծի ֆինանսավորման առավելագույն չափը մեկ միլիոն ՀՀ դրամ է:

- Համալսարանից ստացված ֆինանսավորումը չի կարող ծախսվել Խմբի աշխատանքի վարձատրության և խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով:

- Խումբը պայմանագրով պարտավորվում է Նախագծի իրականացման ընթացքում Համալսարանի բյուջե փոխանցել իր ստացած ֆինանսավորման չափից ոչ պակաս չափով ֆինանսական միջոցներ:

- Տվյալ տարում Հանձնաժողովի կողմից դրական եզրակացությամբ ձեռնարկատիրական գործունեությունն ավարտած Խումբը ազատվում է հաջորդ տարվա մրցույթին մասնակցելուց և Համալսարանի կողմից չի ֆինանսավորվում: Ռեկտորը Խմբի ղեկավարի հետ կնքում է նոր պայմանագիր, և Խմբի տնտեսական գործունեության արդյունքում առաջացած տարեկան համախառն եկամտի 15%-ը փոխանցվում է Համալսարանի բյուջե:

- Յուրաքանչյուր տարվա ձեռնարկատիրական գործունեության արդյունքները Ռեկտորը ներկայացնում է Համալսարանի գիտխորհրդում:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Համալսարանի գիտխորհրդի նիստում ընդունվելուց և ռեկտորի հրամանով հաստատվելու օրվանից:
2. Սույն կանոնակարգում չընդգրկված դեպքերը կարգավորվում են ՀՀ օրենսդրական նորմատիվ ակտերով:

